



ԱՆԱԳԵՐՈՒՄ ԵՐԶՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ
 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
 PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF ALAVERDI

ԳԳ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Ձորավար Անդրանիկ 8/1, 403 ս.
 հեռ. (+374) 25324114, 91199324
 էլ. փոստ info_alaverdi@aarhus.am;
 anushhevovan@rambler.ru

Lori, Alaverdi, Zoravar Andranik str.8/1, 403
 Tel. (+374) 25324114, 91199324
 E-mail info_alaverdi@aarhus.am
 anushhevovan@rambler.ru

27.07.2015թ.

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
 ՊԱՐՈՆ ԱՐԱՄՄԱՅԻՄ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գրիգորյան.

Մույն թվականի հուլիսի 14-ին Ալավերդիում տեղի է ունեցել խորհրդակցություն՝ նվիրված քաղաքում գործող պղնձաձուլական գործարանի ազդեցության գոտում գտնվող համայնքներին հատկացվող սուբվենցիաներին և բնապահպանական ծրագրերի իրականացման խնդիրներին: Խորհրդակցությանը մասնակցել են բնապահպանության նախարարության, Լոռու մարզպետարանի, Ալավերդի, Ախթալա, Հաղպատ, Օձուն, Հազվի և Արորի համայնքների ղեկավարներ:

Վերոնշյալ խնդիրները միշտ եղել են ՀՀ Լոռու մարզպետի, հասարակության և համայնքների ղեկավարների ուշադրության առարկան: Օրինու կենտրոնում /բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոն/ կազմակերպվել են մի շարք քանակարկումներ, մասնագիտական խորհրդատվություններ, որի արդյունքում համայնքերի ղեկավարների կողմից ՀՀ Բնապահպանության նախարարություն և մարզպետին են ներկայացվել առաջարկներ համայնքների ղեկավարներից:

Խնդրում եմ հասարակությանը իրազեկելու նպատակով.

1. Տրամադրել տեղեկություն 2015թ հուլիսի 14-ի քննարան թեմայի, հնչած ելույթների, մեկնաբանությունների ու քննարան գործունեությունների մասին:

Օրինու կենտրոնը մշտապես զբաղվում է սուբվենցիայի կարգով համայնքին տրամադրվող ֆինանսական միջոցներով իրականացվող ծրագրերի խնդիրներով՝ կազմման փուլից սկսած:

Դեռ 2013 թվականին դրական են գնահատել Բնապահպանության նախարարության առաջարկած «Շնչկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթը (սույն թեմայով կատարվող համարվարությանն ուղղված նամակն ու պատասխանը հետևյալ հղումներով՝

<http://aarhus.am/letters/Harcim%20karavarutyun.pdf>, http://aarhus.am/letters/Mari_Patasxan.pdf /

միաժամանակ առաջարկելով ավելի մեծ թվով համայնքների տրամադրել սուբվենցիա, այդ

թվում բնօգտագործման վճարներից: Սակայն, ինչպես պարզվեց, ՀՀ ֆինանսների

նախարարությունը կրկին մերժել է այդ նախաձեռնությունը:

Խնդրում եմ հայտնել.

2. Ի՞նչ վիճակում է նշված գործընթացը, մասնավորապես, տրամադրված է արդյոք բնապահպանության նախարարությունը շարունակել այդ գործընթացը:

Հարգանքով՝ Ալավերդու Օրինու կենտրոնի համակարգող

Անուշ Էվոյան